**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ------ 2024թ.** **N-----Ա**

**ՈՐՈՇՈՒՄ**
**ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով ձեռք բերված, 1,416,800,000.00 (մեկ միլիարդ չորս հարյուր տասնվեց միլիոն ութ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 14 հատ Zhongtong bus LCK6126EVG մակնիշի տրոլեյբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**
**«ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Որոշման ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար նոր ներկրված թվով 14 հատ Zhongtong bus LCK6126EVG մակնիշի տրոլեյբուսների շահագործումը նախատեսվում է հանձնել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում:

Արդյունքում հնարավորություն կստեղծվի կանոնավորելու ներհամայնքային ուղևորափոխադրումների գործընթացը, զգալիորեն բարելավելու ուղևորների սպասարկման վիճակը և որակը:

Միաժամանակ, հիշյալ տրոլեյբուսների մասով «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել հայտ՝ գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ ներմուծման մաքսատուրքից ազատելու վերաբերյալ, և ճանապարհային ոստիկանությունում տրոլեյբուսների համապատասխան հաշվառումն ու գրանցումներն իրականացվելու են կրկին «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի կողմից, ինչով էլ ծագում է հիշյալ որոշման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքի նվիրատվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**